

ՌԵԳՈ – ԵՐԵՒԱ

1. ՀԱՄԱՌՈՑ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՌԵԳՈ ԵՐԵՒԱ» պրոդուկտը դժբախտ պատահարներից ապահովագրություն է ամրագրված դրամական հատուցմամբ: Պրոդուկտը թույլ է տալիս տրամադրել դժբախտ պատահարներից ապահովագրական պաշտպանություն 2-17 տարեկան երեխաների համար: Ապահովադիր կարող է հանդիսանալ ցանկացած իրավաբանական անձ:



ՎԿԱՅԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

1 տարի



ՌԻԺԻ ՄԵՋ Է ՄՏՆՈՒՄ

Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքմանը հաջորդող ամսաթվի՝ ժամը 00:00-ին:



2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

Դժբախտ պատահար է համարվում Պայմանագրով նախատեսված իրադարձությունը, որը տեղի է ունեցել պայմանագրի գործողության ընթացքում և ապահովագրության տարածքում, տեղի է ունեցել փաստացի արտաքին գործոններից, պայմանավորված չէ որևէ հանկարծակի կամ անկանխատեսելի հիվանդությամբ, Ապահովագրված անձի կամ քից անկախ իրադարձություն է, որի հետևանքով Ապահովագրված անձը ստացել է հաշմանդամություն կամ մահացել է, այդ թվում

- բնության տարերային երևույթներ, պայթյուն, այրվածք, ցրտահարություն, ջրահեղձում, էլեկտրական հոսանքի ազդեցություն, շանթահարում, արևահարում, երրորդ անձանց կամ կենդանիների հարձակում, Ապահովագրված անձի կամ նրա վրա որևէ իրի վայր ընկնելը, անսպասելի խեղդամահություն, օտար մարմնի հանկարծակի ընկնելը շնչառական ուղիներ, հանկարծակի սուր թունավորում վնասակար մթերքներով կամ նյութերով (թունավոր բույսերով, քիմիական նյութերով, դեղորայքով, վատորակ սննդամթերքով), ինչպես նաև տրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով տեղի ունեցած դեպքեր, վթարներ, մեքենաների, մեխանիզմների, արտադրության միջոցների և այլ սարքերի օգտագործում: Դժբախտ պատահար է համարվում նաև մարմնի վերջույթների կամ ողնաշարի կտրուկ ֆիզիկական գերլարվածությունը, որի հետևանքով տեղի է ունենում հոդախախտ, մկանների, ջիլերի կամ անոթների մասնակի կամ ամբողջական պատռվածք:

Դժբախտ պատահար չեն համարվում սուր, քրոնիկական և ժառանգական հիվանդությունների ցանկացած ձևերը /այդ թվում՝ սրտի կաթված, ուղեղի կաթված և օրգանների այլ հանկարծակի վնասվածքներ, որոնք ժառանգական պաթոլոգիայի կամ հիվանդության զարգացման հետևանքով առաջացած պաթոլոգիայի հետևանք են (անաֆիլակտիկ շոկ, ինչպես նաև ինֆեկցիոն հիվանդություններ, սննդային տոքսիկոզ ինֆեկցիա) սալմոնելեզ, դիզենտերիա և այլն:



3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

- **Մարմնական վնասվածք**
Հատուցումն իրականացվում է համաձայն Պայմանների՝ Աղյուսակ 2-ի (կախված վնասի բնույթից՝ տոկոսային):
- **Ֆունկցիոնալության սահմանափակում**
Հատուցումն իրականացվում է ապահովագրական գումարի 75%-ի չափով
- **Մահ**
Հատուցումն իրականացվում է միանվագ՝ ապահովագրական գումարի 100%-ի չափով, եթե Ապահովագրված անձի մահը վրա է հասել ոչ ուշ, քան մահացու ելքի հանգեցրած ապահովագրական պատահարի օրվանից 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

Տարբերակ	Ապահովագրավճար	Ապահովագրական գումար
Տարբերակ 1	2.500 ՀՀ դրամ	300.000 ՀՀ դրամ
Տարբերակ 2	5.000 ՀՀ դրամ	600.000 ՀՀ դրամ

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Ապահովագրավճարը վճարվում է միանվագ՝ պայմանագրի կնքման պահին:

6. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

- Զի կիրառվում



7. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

- ՀՀ տարածք

8. ՊԱՀԱՆՁՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ընկերության վավերապայմաններ
- Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ
- Կոնտակտային տվյալներ

060 50 57 57

regoinsurance.am

info@regoinsurance.am

ՀՀ, 0014, ք. Երևան, Կոմիտաս 62 շ., 93-93/1 տարածք

